



Փորձագիտական զեկույց

2016-ի նոյեմբեր ամսվա համար բնապահպանական փորձագետի համար առանցքային խնդիրը հանդիսացել է համայնքի 2017թ-ի տարեկան բյուջեի նախագծի բնապահպանական մասի եւ համայնքի սոցիալ- տնտեսական զարգացման հնգամյա ռազմավարական պլանի նախագծի բնապահպանական ծրագրերի կազմման պրոցեսը :

Բացի նշվածը, կատարվել են նաեւ մի քանի խորհրդատվական հանդիպումներ, անցկացվել են սեմինարներ, եւ մասնակցություն այլ միջոցառումների: Նյութերը տարածվել եւ լուսաբանվել են նաեւ ԶԼՄ-ների միջոցով:



- **2016թ. նոյեմբերին պլանավորվել է.**

ա/ Ալավերդի համայնքի 2017թ-ի բյուջեի նախագծի հանրային քննարկում

բ/ բյուջեի բնապահպանական մասի ներկայացում

գ/ քաղաքի սանիտարահիգիենիկ պայմանների վերանայում եւ խորհրդատվություն կոմունալ ծառայության աշխատակիցներին

դ/ սեմինար-դասընթաց բարձր դասարանցիների, երիտասարդների համար

ե/ համայնքի սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա ռազմավարական պլանի նախագծի կազմում/բնապահպանական ծրագրեր/

- **Կատարված աշխատանքներ եւ արդյունքներ**

* 2016 թ նոյեմբեր ամսին Ալավերդու համայնքապետարանը կազմել եւ հանության քննարկմանն է ներկայացրել համայնքի 2017թ բյուջեի նախագիծը: Ըստ նախագծի՝ այն կազմում է 408, 736 մլն դրամ, որը ներառում է 29,755 մլն բնապահպանական հատկացումները: Բնապահպանական սուբվենցիայի համապատասխանաբար 70% բնապահպանական եւ 30%առողջապահական ծրագրերը կառավարություն կողմից թեեւ հաստատվել են դեռ 2016-ի մայիսին, սակայն քաղաքացիներին հետաքրքրող բնապահպանական հարցերը բազմաթիվ էին: Հարցերին պատասխանելուց եւ որոշակի պարզաբանումներ տալուց հետո, Ալավերդու քաղաքապետի առաջարկությամբ Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգողը ներկայացրեց

բնապահպանական ամբողջ տեղեկատվությունն ու փորձագիտական վերլուծություն քաղաքի առջև ծառայած բնապահպանական կարելուրագույն խնդրի՝ օդի աղտոտվածության եւ «Կանաչ էկոնոմիկա»-ի վերաբերյալ: Հնչեցված հարցերին տրված պատասխանները, ներկաների պնդմամբ, հկ-ներին եւ հասարակությանն առավել պարտավորեցնում են ուշադրության կենտրոնում պահել բնապահպանական ոլորտը: Բյուջեի հանրային քննարկմանը ակտիվորեն մասնակցել են նաեւ ակտիվ դպրոցականներ:



* Լոռու մարզպետարանում կազմակերպված քննարկմանը, որը վարում էր ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ Հ. Թադևոսյանը, համապատասխան կառույցներից, համայնքների ղեկավարներից բացի, ակտիվ կառուցողական մասնակցություն է ունեցել Ալավերդու Օրհուս կենտրոնը: Քննարկումը վերաբերում էր «Էյ Սի Փի» ընկերության կողմից աղտոտման չափանիշներին: Օրհուս կենտրոնի վերլուծական եւ փաստարկներով հիմնավորված ելույթից հետո մասնակիցներին կենտրոնի կողմից տրամադրվել են համապատասխան տեղեկատվական փաստաթղթեր, անկախ փորձագիտական եզրակացություններ: ՀՀ վարչապետի հանձնարարականով, քննարկման արդյունքները ներկայացվել են կառավարություն՝ խնդրին հստակ եւ կոնկրետ լուծում տալու նպատակով:



* Խորհրդատվական հանդիպում է կազմակերպվել կոմունալ բաժնի աշխատակիցների հետ: քաղաքացիների պահանջն ու բաժնի գործունեությունը վերանայելուց հետո, որոշվել է քաղաքի այն հատվածներում, որտեղ աղբարկղեր չկան, տեղադրել նորերը: Քաղաքը բարեկարգ տեսքի բերելու համար բարձր դասարանցի դպրոցականների կողմից ստեղծված էկոակումբը հետեւողական մշտադիտարկումներ է անցկացնում քաղաքի տարբեր հատվածներում: Հայտնաբերված խնդիրները լուսանկարների եւ առաջարկների տեսքով ներկայացվում են Օրհուս կենտրոն, որտեղ վերլուծելուց եւ համակարգելուց հետո ներկայացվում են քաղաքապետին: Բացահայտված եւ կոնկրետ ներկայացված խնդիրներն օգնում են արագ կողմնորոշվելու եւ լուծումներ գտնելու: Դպրոցականների կողմից ֆեյսբուք սոցիալական ցանցում ստեղծվել է «Մաքուր համայնք» էջը.

https://web.facebook.com/cleancommunityalaverdi/?fref=ts&_mref=message_bubble&_rdr



* Համայնքի բնապահպանական խնդիրները, Օրհուսի կոնվենցիային առնչվող հարցերին ծանոթանալու, այդ գործընթացներում իրենց դերը պատկերացնելու համար կազմակերպվել է ոչ ֆորմալ դասընթաց ակտիվ դպրոցականների եւ երիտասարդների համար. Այն անցկացրել է Օրհուս կենտրոնի համակարգողը: Դասընթացից հետո դպրոցականների մեծ մասը պատրաստակամություն է հայտնել կենտրոնի կամավոր դառնալու համար:



* Ալավերդու սոցիալ - տնտեսական զարգացման հնգամյա ռազմավարական պլանի նախագծային աշխատանքներում քաղաքապետարանը բնապահպանական ծրագրերի եւ հարցերի մասով համագործակցում է Օրհուս կենտրոնի հետ: Պլանի կազմման համար, օրենսդրական պահանջով ստեղծված քաղաքապետին կից խորհրդի կազմում է նաեւ Օրհուս կենտրոնի համակարգողը: ՏԻՄ-ին կենտրոնի կողմից ներկայացվել են հանրության շրջանում անցկացված հարցումները, որի հիման վրա վերլուծությունից հետո կկազմվի առաջարկների փաթեթ եւ կներկայացվի քաղաքապետին: Ակնկալվում է առաջարկների ներառում համայնքի զարգացման պլանում:



Անուշ Էվոյան
 ԵԱՀԿ բնապահպանական հարցերով փորձագետ
 E:mail – anushevoyan@rambler.ru
 Ալավերդու Օրհուս կենտրոն
 Նոյեմբեր 2016թ.